ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 213.2. Նյութական պահուստի օրենսդրության պահանջների խախտումը

1. Պետական պահուստի նյութական արժեքների պակասորդի կամ ինքնակամ օգտագործման հայտնաբերումը պահպանող կազմակերպության համար՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Պետական պահուստի նյութական արժեքների պակասորդի կամ ինքնակամ օգտագործման հայտնաբերման պահից 30 օրվա ընթացքում պետական պահուստում պակասորդը չվերականգնելը պահպանող կազմակերպության համար՝

առաջացնում է տուգանք՝ պակաս կամ ինքնակամ օգտագործված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 60 օրվա ընթացքում պետական պահուստում չվերականգնելը՝ 100 տոկոսի չափով:

3. Պահպանող կազմակերպության կողմից պետական պահուստի նյութական արժեքների փչացումը կազմակերպության համար՝

առաջացնում է նախազգուշացում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 30 օրվա ընթացքում, փչացած նյութական արժեքների լրիվ փոխարինումը չկատարելը կազմակերպության համար՝

առաջացնում է տուգանք՝ փչացած ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 60 օրվա ընթացքում փչացած նյութական արժեքների լրիվ փոխարինումը չկատարելը՝ փչացած ապրանքների արժեքի 100 տոկոսի չափով:

5. Զորահավաքային պահուստ ձևավորելու առաջադրանքը, ինչպես նաև ռազմավարական պաշարների պահուստի կուտակումը սահմանված ժամկետներում չկատարելը կազմակերպության համար՝

առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպությունների (բացառությամբ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝ ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած, ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված չկուտակված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝ 100 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների համար՝ չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝ չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

6. (6-րդ մասն ուժը կորցրել է 09.12.2023 թվականից՝ 14.11.23 ՀՕ-350-Ն (օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) օրենք)

7. Զորահավաքային կամ ռազմավարական պաշարների պահուստի պակասորդի կամ ինքնակամ օգտագործման հայտնաբերումը կազմակերպության համար՝

առաջացնում է նախազգուշացում:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում, զորահավաքային կամ ռազմավարական պաշարների պահուստի պակասորդ կամ ինքնակամ օգտագործված ապրանքները նյութական պահուստում չվերականգնելը՝

առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպությունների (բացառությամբ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝ ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, ռազմավարական պաշարների պակասորդ կամ ինքնակամ օգտագործված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը՝ 100 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների համար՝ չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը՝ չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

9. Զորահավաքային պահուստում կամ ռազմավարական պաշարների պահուստում հաստատված անվանացանկին, տեխնիկական պայմաններին և սահմանված որակական հատկանիշներին չհամապատասխանող ապրանքներ ամբարելը և (կամ) պահելը, ինչպես նաև ապրանքների պահպանման ժամկետները գերազանցելը կազմակերպության համար՝

առաջացնում է նախազգուշացում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում, զորահավաքային պահուստում կամ ռազմավարական պաշարների պահուստում հաստատված անվանացանկին, տեխնիկական պայմաններին և սահմանված որակական հատկանիշներին համապատասխանող ապրանքներ չամբարելը, ինչպես նաև պահպանման սահմանված ժամկետը լրացած ապրանքները չփոխարինելը՝

առաջացնում են տուգանք՝

1) կազմակերպությունների (բացառությամբ դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝ այն ապրանքների ձեռքբերման արժեքի 10 տոկոսի չափով, որոնց մասով թույլ են տրվել այդ խախտումները, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ ապրանքները չփոխարինելը՝ 100 տոկոսի չափով.

2) դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների համար՝ չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ չփոխարինելը՝ չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

11. Սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերում նշված ապրանքների արժեքի 300 տոկոսի չափով:

(213.2-րդ հոդ. լրաց. 04.03.20 ՀՕ-130-Ն, փոփ. 14.11.23 ՀՕ-350-Ն (օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) օրենքներ)

Հոդված 213.3. Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին օրենսդրության պահանջները խախտելը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պաշտպանական կառույցների (բացառությամբ բնակելի ֆոնդի) պահպանության, սպասարկման, շահագործման, հիմնանորոգման, վերանորոգման, նախապատրաստման, պատրաստվածության բերման ապահովման պարտականությունը չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, կազմակերպության պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակներում իրենց գործելու կամ աղետների ռիսկի կառավարման պլանը չմշակելը, լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելը, չհաստատելը կամ հանրապետական արձագանքման պլաններով իրենց վերապահված գործողությունները պլանում չներառելը, ինչպես նաև դրա կիրարկումը չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական տույժի միջոցը կիրառելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից Կառավարության սահմանած կարգով ազդարարման համակարգեր չստեղծելը, դրանց անխափան աշխատանքը կամ աշխատողների ազդարարումը չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

5. Կազմակերպությունների կողմից, իրենց գործունեության առանձնահատկություններից ելնելով, ռիսկային գոտում գտնվող համայնքների ազդակիր բնակավայրերում ազդարարման համակարգեր չստեղծելը կամ դրանց անխափան աշխատանքը չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից աղետների ռիսկի կառավարման կամ բնակչության պաշտպանության ուղղությամբ իրենց աշխատողների կամ համայնքի բնակչության կամ կազմակերպության աշխատողների ուսուցումը կամ իրազեկումը չիրականացնելը, ինչպես նաև ուսումնավարժություններ չանցկացնելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված վարչական տույժի միջոցը կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման մասին լիազոր մարմնին չտեղեկացնելը՝

1) առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով .

2) առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով

3) առաջացնում է տուգանքի նշանակում՝ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

9. Կազմակերպությունների կողմից անվտանգության անձնագիրը (արտադրական վտանգավոր օբյեկտներ), անվտանգության վկայագիրը (վտանգավոր արդյունաբերական օբյեկտ), անվտանգության հայտարարագիրը (հիդրոտեխնիկական կառուցվածքների) կամ դրանցում կատարված փոփոխությունները սահմանված ժամկետում լիազոր մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների պատասխանատու անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից իրականացվող աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության վիճակի պլանավորված համալիր գնահատման և ոչ պլանավորված ուսումնասիրության գործընթացին խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ կազմակերպությունների պատասխանատու նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Հոդված 224.3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 11-րդ մասով, 213.3-րդ հոդվածի 2-10-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

(224.3-րդ հոդվածը լրաց. 13.07.23 ՀՕ-260-Ն)

Հոդված 244.23. Սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայություններ տրամադրելու բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(հոդվածը 24.10.24 ՀՕ-427-Ն օրենքի լրացման մասով ուժի մեջ է մտնում նույն օրենքի պաշտոնական հրապարակումից 18 ամիս հետո):

Հոդված 244.24. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

1. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառներում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում և վարչական տույժեր է նշանակում նաև սույն օրենսգրքի 213.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով:

2. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները և տարածքային բաժինների պետերը: